# ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՎԱՐՉԱՇՐՋԱՆ



Ծանուցման ամսաթիվը՝ __________
Գործի անվանումը՝ __________
Համարը՝ __________
Աշխատողի անունը՝ __________
Համարը՝ __________
Հեռախոսը՝ __________
Հասցեն՝ __________
__________
__________

(ADDRESSEE)

Հարցեր ունե՞ք: Հարցրեք Ձեր աշխատողին:

**Նահանգային լսում. Դուք կարող եք լսում պահանջել, եթե կարծում եք, որ այս գործողությունը սխալ է: Ձեր նպաստները չեն կարող փոխվել, եթե Դուք լսում եք պահանջում, նախքան այս գործողության իրականացումը: Եթե դուք և վարչաշրջանը համաձայնության չեք գալիս կամ եթե դուք չեք լսել ձեր աշխատողից, մի սպասեք լսում պահանջելու համար: Դուք պետք է լսում պահանջեք մի քանի օրերի ընթացքում: Տեսեք այս ծանուցման հետևի մասը լրացուցիչ տեղեկությունների համար ու պարզեք, ինչպես լսում պահանջել:**

__________, համաձայն մեր արձանագրությունների՝ դուք չեք.

- ☐ Ստորագրել Welfare-to-Work ծրագիրը __________ ամսաթվին:
- ☐ Մասնակցել __________ -ին __________ ամսաթվին:
- ☐ Արձանագրել մեծ առաջընթաց ձեր __________ գործունեությունում, քանի որ __________ :
- ☐ Համաձայնվել անցնել աշխատանքի __________ վայրում:
- ☐ Պահպանել ձեր աշխատանքը __________ վայրում:
- ☐ Պահպանել եկամուտների նույն քանակը:

**Մենք չենք փոփոխի ձեր կանխիկ վճարմամբ օգնության գրանտային գումարի չափը:**

**ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԽՈՍԵՆՔ ՁԵԶ ՀԵՏ**

Welfare-to-Work ծրագրում մնալու համար մենք պետք է զրուցենք ձեզ հետ այս խնդրի մասին: Ձեզ համար նշանակվել է հանդիպում __________ ամաթվին, ժամը __________ -ին, __________ վայրում: Եթե այս հանդիպմանը ներկա լինելու համար ձեզ անհրաժեշտ է տրանսպորտ կամ մանկական խնամք, ապա զանգահարեք Welfare-to-Work ծրագրի աշխատակցին ստորև բերված հեռախոսահամարով:

Welfare-to-Work աշխատողի անունը՝ __________

Հեռախոսահամարը՝ __________

Եթե չեք կարող ներկա գտնվել այս հանդիպմանը, ապա զանգահարեք ձեր աշխատակցին նոր ժամ պայմանավորվելու համար: Եթե չունենաք հարգելի պատճառ, ապա կարող եք փոխել այս հանդիպումը միայն մեկ անգամ: Խնդիրը քննարկելու համար դուք կարող եք նաև զանգահարել ձեր աշխատակցին՝ հանդիպմանը գնալու փոխարեն: Դուք պետք է զանգահարեք ձեր աշխատակցին հանդիպման համար նոր ժամ պայմանավորվելու կամ ձեր խնդրի մասին հեռախոսով խոսելու համար՝ զանգահարելով __________ հեռախոսահամարով:

Ձեր աշխատակցի հետ զրույցի ընթացքում ձեզ կհարցնեն, արդյոք ունեցել եք հարգելի պատճառ («հարգելի պատճառաբանություն») չանելու համար այն, ինչ մենք ձեզանից խնդրել էինք անել: Եթե մենք հաստատենք, որ դուք հարգելի պատճառ ունեիք, ապա մենք ձեզ չենք հեռացնի Welfare-to-Work ծրագրից այս խնդրի հետևանքով: Հարգելի պատճառների օրինակներից է՝ երեխային խնամող չունենալը կամ փոխադրամիջոց չունենալը: ԱՅԼ հարգելի պատճառներին ծանոթանալու համար տեսեք այս ծանուցման հետ ուղարկված «Հարգելի պատճառի որոշման խնդրանքը»:

Եթե դուք չունենաք մեր խնդրանքները չկատարելու հարգելի պատճառ, ապա Welfare-to-Work կանոններին համապատասխանելու համար դուք կարող եք համաձայնել համապատասխանության ծրագրին: Մենք չենք հեռացնի ձեզ Welfare-to-Work ծրագրից, եթե դուք համաձայնեք համապատասխանության ծրագրին և անեք այն, ինչ ձեզանից պահանջի այն: Եթե դուք համաձայնեք համապատասխանության ծրագրին և անեք այն, ինչ ձեզանից պահանջի այն, մենք չենք հեռացնի ձեզ Welfare-to-Work ծրագրից: Այս դեպքում դուք կստանաք առանձին ծանուցում:

**ԻՆՉՊԵՍ ՄՆԱԼ WELFARE-TO-WORK ԾՐԱԳՐՈՒՄ**

**Սկսած __________՝ դուք հեռացվելու եք Welfare-to-Work ծրագրից, եթե մեզ ցույց չտաք, որ հարգելի պատճառ ունեիք չանելու այն, ինչը մենք պահանջում ենք ձեզանից: Եթե դուք չունեք հարգելի պատճառ, ապա Welfare-to-Work ծրագրում մնալու համար դուք կարող եք համաձայնվել համապատասխանության ծրագրին: Եթե դուք չհամաձայնվեք համապատասխանության ծրագրին, ապա դուք այլևս չեք ստանա որևէ այլ ծանուցում նախքան Welfare-to-Work ծրագրից հեռացվելը:**

Մենք չենք վճարելու փոխադրամիջոցներին, կամ աշխատանքին, կամ վերապատրաստումներին առնչվող ծախսերը, եթե Welfare-to-Work ծրագրում չեք: Մենք կարող ենք վճարել երեխաների խնամքի համար, եթե դուք աշխատում եք կամ սովորում դպրոցում:

**ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ WELFARE-TO-WORK ԾՐԱԳԻՐ**

Եթե դուք հեռացվել եք Welfare-to-Work ծրագրից, հնարավոր է, որ կարողանաք հետագայում կրկին միանալ ծրագրին: ՊԱՐԶԵԼՈՒ համար, թե երբ կրկին կկարողանաք մասնակցել ու ինչ պետք է անել, զանգահարեք վարչաշրջան __________ հեռախոսահամարով:

**ՁԵԶ ԱՆՀՐԱԺԵ՞ՇՏ Է ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ:** Այս խնդրի հետ կապված կարող եք ստանալ անվճար օգնություն հետևյալ մարմիններից.

Տեղային իրավաբանական օգնության գրասենյակ՝ (     )

__________

Նահանգային վելֆերի իրավունքների կազմակերպություն՝ (     )

__________

**CalFresh.** եթե Welfare-to-Work պահանջներին չհամապատասխանումը նույնպես առաջացնի CalFresh-ի տուգանք, ապա, հնարավոր է, դուք չկարողանաք ստանալ CalFresh: Եթե առկա է CalFresh-ի տուգանք, ապա դուք կստանաք մեկ այլ ծանուցում, որը ձեզ կտեղեկացնի, թե որքան ժամանակով ձեր CalFresh-ի նպաստները կդադարեցվեն:

**Medi-Cal.** այս գործողության ծանուցումը ՉԻ փոխում կամ դադարեցնում Medi-Cal նպաստները: **Շարունակեք օգտագործել ձեր պլաստիկ Նպաստների հաստատման քարտ(եր)ը:**

**Կանոններ.** կիրառվում են այս կանոնները. CalWORKs MPP § 42-712 (բացառություններ), 42-713 (հարգելի պատճառ), 42-721 (չհամապատասխանումը և հարգելի պատճառ): CalFresh MPP § 63-407.521: Կարող եք ծանոթանալ այս կանոններին ձեր վելֆերի գրասենյակում:

## ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

**Դուք իրավունք ունեք դատաքննություն պահանջելու, եթե համաձայն չեք տարածաշրջանի որևէ որոշման հետ: Դուք ընդամենը 90 օր ունեք դատաքննություն պահանջելու համար: 90 օրը սկսվում է տարածաշրջանի կողմից այս ծանուցումը Ձեզ տալու կամ ուղարկելու հաջորդ օրվանից: Եթե Դուք հարգելի պատճառ ունեք, թե ինչու ի վիճակի չեք եղել դիմել դատաքննության համար 90 օրվա ընթացքում, ապա դեռ կկարողանաք դիմել դատաքննության համար: Եթե հարգելի պատճառ ներկայացնեք, դատաքննությունը կարող է նշանակվել:**

**Եթե դատաքննություն պահանջեք <u>մինչև</u> Cash Aid-ի, Medi-Cal-ի, CalFresh-ի կամ Child Care-ի որոշման ուժի մեջ մտնելը,**

- Ձեր Cash Aid-ը կամ Medi-Cal-ը նույնը կմնա քանի դեռ Դուք սպասում եք դատաքննությանը:
- Ձեր Child Care ծառայությունները նույնը կմնան քանի դեռ Դուք սպասում եք դատաքննությանը:
- Ձեր CalFresh-ի նպաստները նույնը կմնա քանի դեռ Դուք սպասում եք դատաքննությանը կամ Ձեր արտոնագրման ժամանակաշրջանի վերջը՝ կախված այն բանից, թե որը ավելի շուտ տեղի կունենա:

**Եթե դատաքննության վճիռը որոշի, որ մենք ճիշտ էինք, Դուք մեզ պարտք կլինեք Ձեր ունեցած լրացուցիչ Cash Aid-ը, CalFresh-ը կամ Child Care ծառայությունը:** Որպեսզի մեզ թույլ տաք նվազեցնել կամ դադարեցնել Ձեր նպաստները մինչև դատաքննությունը, նշեք հետևյալը՝

Այո, նվազեցրեք կամ դադարեցրեք. ☐ Cash Aid-ը ☐ CalFresh-ը ☐ Child Care-ը

**Քանի դեռ Դուք սպասում եք դատաքննության վճռին՝**

**<u>Welfare to Work-ի համար</u>**

Կարող եք չմասնակցել գործունեություններին:

Կարող եք երեխայի խնամքի վճարումներ ստանալ աշխատանքի և այնպիսի գործունեությունների համար, որոնք տարածաշրջանի կողմից հաստատվել էին մինչև այս ծանուցումը:

Եթե մենք Ձեզ հայտնել էինք, որ Ձեր այլ օժանդակող սպասարկումների վճարումները կդադարեն, Դուք այլևս վճարումներ չեք ստանա, նույնիսկ եթե հաճախեք Ձեր գործունեություններին:

Եթե մենք Ձեզ հայտնել էինք, որ կվճարենք Ձեր այլ օժանդակող սպասարկումների համար, նրանք կվճարվեն այն գումարով և այն կարգով, որ մենք Ձեզ հայտնել ենք այս ծանուցման մեջ:

- Այս օժանդակող սպասարկումները ստանալու համար պետք է հաճախեք այն գործունեություններին, որ տարածաշրջանը Ձեզ ասել էր, որ հաճախեք:
- Եթե տարածաշրջանի վճարած օժանդակող սպասարկումների գումարը դատաքննության Ձեր սպասման ընթացքում չի բավարարում, որ Դուք մասնակցեք, ապա կարող եք դադարել գործունեությանը հաճախել:

**<u>Cal-Learn-ի համար.</u>**

- Դուք չեք կարող մասնակցել Cal-Learn ծրագրին, եթե մենք Ձեզ հայտնել ենք, որ չենք կարող Ձեզ սպասարկել:
- Մենք միայն կվճարենք Cal-Learn-ի հաստատված գործունեության օժանդակող սպասարկումների համար:

### ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Medi-Cal ղեկավարված խնամքի ծրագրի անդամներ.** Այս ծանուցման որոշումը կարող է Ձեզ կանխել Ձեր ղեկավարված խնամքի առողջապահական ծրագրից սպասարկումներ ստանալուն: Ձեզ թերևս հարկավոր լինի կապվել Ձեր առողջապահական ծրագրի անդամության ծառայության հետ, եթե հարցեր ունեք:

**Երեխայի և/կամ բժշկական օժանդակություն.** Երեխաների օժանդակության տեղական գործակալությունը անվճար կարգով կօգնի օգնություն ստանալ, նույնիսկ եթե Դուք կանխիկ փողի օգնություն չեք ստանում: Եթե նրանք այժմ օգնություն են Ձեզ համար ստանում, նրանք դա կշարունակեն մինչև որ Դուք նրանց գրավոր կերպով տեղեկացնեք, որ դադարեն: Նրանք Ձեզ կուղարկեն ներկայումս հավաքած օգնության գումարը, բայց կպահեն այն գումարը, որ պարտք եք տարածաշրջանին:

**Ընտանիքի պլանավորում.** Ձեր սոցապահովության գրասենյակը Ձեզ տեղեկություններ կտրամադրի, թե երբ Դուք այն խնդրեք:

**Դատաքննության նշոց.** Եթե Դուք դատաքննություն պահանջեք, Նահանգի դատաքննության գրասենյակը նշոց կստեղծի: Դուք իրավունք ունեք նշոցը տեսնել մինչև դատաքննությունը և Ձեր գործի վերաբերյալ տարածաշրջանի գրավոր դիրքորոշման օրինակը ստանալ առնվազն երկու օր մինչև դատաքննությունը: Նահանգը կհանձնի դատաքննության Ձեր նշոցը Սոցապահովության բաժնին և ԱՄՆ-ի Առողջապահության և մարդկային ծառայությունների և Գյուղատնտեսության բաժիններին: **(W&I օրենքի հատված 10850 և 10950:)**

## ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

- **Լրացրեք այս էջը:**
- Պատճենահանեք այս էջի առջևի և հակառակ կողմերը Ձեզ մոտ պահելու համար:
  Եթե խնդրեք, Ձեր գործի ղեկավարը կտա Ձեզ այս էջի օրինակը:
- **Փաթեթն ուղարկեք կամ տարեք.**

**ԿԱՄ**

- **Զանգահարեք անվճար հեռախոսահամարով՝ 1-800-952-5253 կամ** լսողության կամ խոսալու դժվարություններ ունեցողները, ովքեր գործածում են TDD՝ **1-800-952-8349** հեռախոսահամարով:

**Օգնություն ստանալու համար. Ձեր դատաքննության իրավունքների կամ իրավական աջակցություն ստանալու համար կարող եք դիմել վերոհիշյալ անվճար հեռախոսահամարներով:** Դուք կարող եք անվճար իրավական աջակցություն ստանալ Ձեր տեղական իրավական աջակցության կամ սոցապահովության իրավունքների գրասենյակից:

**Եթե դատաքննությանը մենակ չեք ուզում գնալ, կարող եք մի ընկերոջ կամ որևէ մեկին բերել Ձեզ հետ:**

### ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔ

Ես դատաքննություն են ցանկանում ______________ տարածաշրջանի Սոցապահովության բաժնի որոշման պատճառով, որը վերաբերվում է իմ

☐ Cash Aid-ին ☐ CalFresh-ին
☐ Medi-Cal-ին ☐ Այլ (թվարկեք) ______________________

**ԱՀԱ, ԹԵ ԻՆՉՈՒ** ______________________________________

______________________________________________________

______________________________________________________

______________________________________________________

______________________________________________________

______________________________________________________

☐ **Եթե լրացուցիչ տեղ է հարկավոր, նշեք այստեղ և էջ ավելացրեք:**

☐ Ինձ հարկավոր է, որ նահանգը ինձ անվճար թարգմանիչ տրամադրի: (Ազգականը կամ ընկերը չեն կարող թարգմանել Ձեզ համար դատաքննության ժամանակ:)

Իմ լեզուն կամ բարբառն է. ______________________

| | |
|---|---|
| ԱՅՆ ԱՆՁԻ ԱՆՈՒՆԸ, ՈՒՄ ՆՊԱՍՏԸ ՄԵՐԺՎԵԼ Է ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ | |
| ԾՆՆԴՅԱՆ ԹԻՎ | ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ |
| ՓՈՂՈՑԻ ՀԱՍՑԵ | |
| ՔԱՂԱՔ | ՆԱՀԱՆԳ ԻՆԴԵՔՍ |
| ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԱՄՍԱԹԻՎ |
| ԱՅՍ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ ԼՐԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԱՆՈՒՆԸ | ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ |

☐ **Ես ցանկանում եմ, որ ներքևում նշված անձը ներկայացնի ինձ այս դատաքննությանը: Ես թույլտվություն եմ տալիս այս անձին տեսնել իմ գրանցումները կամ իմ համար գնալ դատաքննության: (Այս անձը <u>կարող</u> է ընկեր կամ ազգական լինել, բայց չի կարող թարգմանել Ձեզ համար:)**

| | |
|---|---|
| ԱՆՈՒՆ | ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ |
| ՓՈՂՈՑԻ ՀԱՍՑԵ | |
| ՔԱՂԱՔ | ՆԱՀԱՆԳ ԻՆԴԵՔՍ |